

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀԱՅ ՎԻՊԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ

(Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Բաճախիչ. գիտ. դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅԱՆ

Դասական հայագիտության մերօրյա ներկայացուցիչ Կարապետ Մելիք-Օհանջանյանի գիտական լայն ու բազմաճյուղ հետաքրքրությունների մեջ բա-
ցառիկ տեղ է գրավում հայ վիպական բանահյուսությունը: Այդ հետաքրքրու-
թյունը ծայր է առնում տակավին նրա գիտական գործունեության վաղ այգա-
բացին, երբ դեռ Մոսկվայի Լազարյան ճեմարանի սան, գրում է իր անդա-
նիկ ուսումնասիրությունը՝ «Մամիկոնյանների նախարարական տոհմը ըստ
Փավստոսի պատմության»: Աշխատությունը թեպետ ուներ պատմագիտական
թեքում, բայց այնտեղ քննության էին առնված Մամիկոնյանների տոհմի շուր-
ջը հյուսված վիպական ավանդական գրույցները, որոնցով այնքան հարուստ է
Փավստոս Բուզանդի պատմությունը¹:

Ուսանողական այս անդրանիկ շարադրանքը յուրօրինակ նշանաձող է
դառնում Կ. Մելիք-Օհանջանյանի հետագա գիտահետազոտական աշխատանք-
ներում: Բեռլինի համալսարանում և գերմանացի նշանավոր արևելագետների
մոտ ուսանելուց հետո, արևելագիտական հարուստ ու խոր գիտելիքներով զին-
ված, Կ. Մելիք-Օհանջանյանը 1920 թ. գալիս է Երևան և իր հասարակական,
քաղաքական ու գիտամանկավարժական ծանրաբեռնված աշխատանքների
զուգընթաց, զբաղվում է նաև գիտական հետազոտություններով: 1920-ական
թվականներին նրա գիտական շահագրգռությունների կիզակետն է դառնում
հայ հին վիպական բանահյուսության յուրովի ըմբռնված ու գնահատված ցիկ-
լերից մեկը՝ «Լուսավորչի վեպը»²:

1930-ական թթ. հայ վիպական բանահյուսության նկատմամբ Կ. Մելիք-
Օհանջանյանի գիտական հետաքրքրություններն առավել աշխուժանում են,
ծավալվում տարբեր ուղղություններով և բովանդակավորվում նոր ու մեծար-
ժեք արդյունքներով: 1934-ին, Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ նա

¹ 21-ամյա Կ. Մելիք-Օհանջանյանի ռուսերեն գրված գիտական այս երախայրիքը բարձր
գնահատականի և մրցանակի է արժանանում ճեմարանի մասնագիտական գասարանների պրո-
ֆեսորական խորհրդի կողմից: Այս աշխատության գլուխներից մեկը զեկոցվել է Կայսերական
հնագիտական ընկերության Մոսկվայի բաժանմունքի գիտական նիստում, որի հիման վրա երի-
տասարդ Կ. Մելիք-Օհանջանյանը ընտրվում է այդ ընկերության թղթակից անդամ (տե՛ս
Ա. Ղանալյանյան. Կ. Ա. Մելիք-Օհանջանյան, կենսամատենագիտության ներածություն,
Երևան, 1978, էջ 11):

² Այս աշխատությունը մի մեծածավալ ուսումնասիրություն է, որի ձևազիրը պահվում է
հեղինակի արխիվում: Այս անտիպ աշխատությունից երկու ծավալուն հատված հեղինակի կող-
մից հետագայում վերամշակվել և տպագրվել է առանձին: Մեկը՝ «Աղաթանգեղոսի բանահյու-
սական աղբյուրների հարցի շուրջը» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 53—
82), մյուսը՝ «Աղաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուր-
ները» (Մառը և հայագիտության հարցերը. Երևան, 1969, էջ 95—118):

հրատարակում է «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում ու հայ մատենագրության մեջ» ծավալուն ուսումնասիրությունը³։ որը մեզանում համեմատական վիպագիտությանը նվիրված լավագույն աշխատություններից է։ Այստեղ, ինչպես նաև նույն տարին, նույն առիթով և միևնույն ժողովածուում դետեղված հայ-իրանական «Լեոստամ-Ջալ» ժողովրդական լեպի Ա. Բարսեղյանի՝ գրառած պատումի առաջաբանում⁴ Կ. Մելիք-Օհանջանյանը իր համեմատական քննությունները տանում է ոչ միայն իրանական և հայ հին բանահյուսության վիպական մոտիվների ուղղությամբ, այլև հաճախ համեմատության եզր է դարձնում «Սասնա ծռեր» հերոսավեպի մոտիվներն ու կերպարները։ Այսինքն՝ գիտնականի հետազոտական ոլորտի մեջ մտնում է մի նոր թեմա, որ պայմանավորված էր ոչ միայն հետազոտվող նյութի օբյեկտիվ բնույթով, այլև գիտական այն նոր շահագրգռություններով, որոնք սկզբնավորվել էին գիտնականի մոտ հենց հիշյալ տասնամյակի առաջին տարիներին։

1930 թ., երբ Կ. Մելիք-Օհանջանյանը սկսում է աշխատել որպես Հայաստանի գիտությունների, ապա նաև Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտների գիտնական քարտուղար և հին գրականության ու բանահյուսության բաժնի վարիչ, նրա գիտական կյանքում սկսվում է մի նոր և խիստ արդյունավետ ժամանակաշրջան։ Իր գիտակազմակերպչական, գիտամանկավարժական և գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց նա սկսում է զբաղվել նաև բանահավաքչությամբ։ Եվ նրա բանահավաքչական աշխատանքների նպատակակետն է դառնում «Սասնա ծռեր» հերոսավեպի նոր տարբերակների որոնումն ու գրառումը։ Այս նախաձեռնությունը պայմանավորված էր ոչ միայն կուլտուրայի պատմության ինստիտուտի պլանային առաջադրանքով, որի ղեկավարներէից մեկը ինքը՝ Կ. Մելիք-Օհանջանյանն էր, այլև մի կարևոր մտահղացմամբ, որի հեղինակներն էին Եղիշե Չարենցը և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը։ Վերջինս հանձնարարում է Ե. Չարենցին նախապատրաստել «Սասնա ծռերի» պատումների գիտական հրատարակությունը։ Ե. Չարենցը, որ այդ ժամանակ ղեկավարում էր Պետհրատի գեղարվեստական գրականության բաժինը, 1931 թ. կեսերին բանակցություններ է վարում Մ. Աբեղյանի հետ «Սասնա ծռերի» տարբերակների գիտական համահավաք հրատարակության շուրջ⁵։ Այդ առթիվ առաջ է քաշվում նաև վեպի նոր տարբերակների գրառման անհրաժեշտությունը⁶։

Մ. Աբեղյանը, հավանություն տալով հանդերձ Ե. Չարենցի այդ կարևոր նախաձեռնությանը, գործի ծանրությունն ու իր վատառողջությունը նկատի առնելով, երկիցս հրաժարվում է հանձն առնել այդ հրատարակության ընդհանուր խմբագրությունը։ Չարենցի առաջարկությունը կրկնվում է, այս անգամ առավել որոշակի պայմաններով, որ առաջ է քաշում Մ. Աբեղյանը։ Վերջինս, պայմանավորվելով Կ. Մելիք-Օհանջանյանի հետ և ստանալով նրա համատեղ աշխատելու համաձայնությունը, ընդունում է Պետհրատի առաջարկը։

1932 թ. սկզբներին Աբեղյանի և Չարենցի միջև կնքվում է համապատասխան պայմանագիր, որով հիմք էր դրվում մեր մշակույթի պատմության մեջ մի նշանակալից իրադարձության՝ հայկական հերոսավեպի գիտական հրատարակությանը։ Ահա այս բարենպաստ միջոցառումն է ծալք առնում գիտական այն սխրանքը, ու բախտոտոր էղավ թե՛ Կ. Մելիք-Օհանջանյանի և թե՛ հայ բանագիտության համար։

Արդեն 1932 թ. կեսերին Կ. Մելիք-Օհանջանյանը կուլտուրայի պատմության ինստիտուտի միացյալ բանահավաքչական արշավախմբի գլուխ անցած

³ Ֆիրդուսի, բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու. Երևան, 1934, էջ 3—116։

⁴ Նույն տեղում, էջ 159—166։

⁵ Ս. Հարությունյան. Մանուկ Աբեղյան, կյանքն ու գործը. Երևան, 1970, էջ 125 և հտ.։

⁶ Կ. Մելիք-Օհանջանյան. Մի թերթիկ իմ հուշերից.—Հիշողություններ Ե. Չարենցի մասին. Երևան, 1961, էջ 326 և հտ.։

շրջում է արևմտահայ գաղթականներով վերաբնակեցված Հայաստանի գյուղերը և Թալինի շրջանի ափերը գյուղերից գրառում վեպի երեք նոր արժեքավոր պատումներ, իսկ շորորդը գրանցում է Երևանում՝ ալաշկերտցի Մանուկ Թորոյանից։ Նույն ջանադրությամբ նա իր բանահավաքական գործունեությունը շարունակում է հաջորդ՝ 1933 թ., այս անգամ Վեդիում և Աշտարակում, գրանցելով վեպի ևս երեք նոր տարբերակ։ Եվ, վերջապես, 1934-ին, Երևանում, կաճեցրի Հովհան Զոհրաբյանից նա գրի է առնում ևս մի նոր պատում։ Այդպես, երեք տարվա ընթացքում Կ. Մելիք-Օհանջանյանը հայտնաբերում է և գրի առնում «Սասնա ծռեր» հերոսավեպի ութ նոր պատում, որը քանակի առումով բացառիկ երևույթ էր հայ վիպահավաքման պատմության մեջ։ Բայց նորությունը միայն քանակը չէր։ Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած պատումները պատկանում էին արևմտահայ տարբեր ազգագրական շրջանների. երկու պատում գրաված էր շատախիցի, մեկ պատում՝ կաճեցրի, մեկ պատում՝ մոկացի, երկու պատում՝ ալաշկերտցի և երկու պատում՝ սասունցի վիպասացներից⁴։ Եթե հիշյալ ազգագրական շրջաններից այս կամ այն չափով կային վեպի նախկինում գրաված պատումներ, ապա սասունցի վիպասացներից, այսինքն՝ վեպի բուն հայրենիքից, որքան էլ զարմանալի լիվա, վեպի ոչ մի պատում մինչ այդ չէր գրավել⁵։ Առաջինը Կ. Մելիք-Օհանջանյանն էր, որ հայագիտությանը իրազեկ էր դարձնում Սասնա պատումների գոյությունը, ընդ որում պատումներից մեկը գրաված էր «Սասնա ծռեր» մի այնպիսի հոշակաված վիպասացից (85-ամյա Թամո Դավթյան), որը մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում իր համերկրացիների շրջանում ոչ միայն իր ապրած տարիներին, այլև այժմ՝ տակավին նրան հիշող սերունդների հոգիներում։ Ուշագրավն այն է. որ թե՛ Թամոն և թե՛ նրան հիշող հայրենակիցները, Թամոյին սերված էին համարում Սասունցի Դավթից (փաստ՝ նրա Դավթյան ազգանունը), իսկ Սասնա Ճախրկան գյուղի այն ջրաղացը, որի ջրաղացպանն է եղել Թամոն, համարվել է Դավթի ջրաղացը և քարը բերված Դավթի կողմից։



Ահա այդ սասունցի տոհմիկ վիպասացից Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած պատումը արժեքավոր էր ոչ միայն իր առաջնեկությամբ, այլև իր վիպական բաղադրությամբ ու որակով։ Այն, հետագայում գրաված Սասնա պատումների մեջ, մնում է լավագույններից մեկը։ Իսկ ալաշկերտցի Մանուկ Թորոյանից Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած պատումը թե՛ իր ծավալով (3374

⁴ Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած բոլոր ութ պատումները հետագայում տպագրվում են «Սասնա ծռեր» գիտական համահավաք հրատարակության Ա և Բ հատորներում (Սասնա ծռեր. խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Արեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ.-Օհանջանյանի. Ա հատոր, Երևան, 1936, պատումներ ԺԲ (էջ 601—648), ԺԶ (էջ 753—784), ԺԷ (էջ 785—814), ԻԵ (էջ 1087—1126). Բ հատոր, Ա մաս, Երևան, 1944, պատումներ Ե (էջ 153—197), Զ (էջ 199—223), Ը (էջ 247—353), Թ (էջ 355—404)։

⁵ 1971 թ. վեպի նոր պատումներ որոնելիս, Թալինի շրջանի Ագարակ գյուղի մի քանի բանիմաց սասունցիներ վկայեցին, որ 1920-ական թթ. մեկը էջմիածնից եկել է իրենց գյուղ՝ հռչակված վիպասաց, Սասնո Արծվիկ գյուղացի Օհանի մոտ։ Այստեղ է հրավիրվել նաև Թամո Դավթյանը։ Երկուսին էլ տարել են Երևան, պատմել են տվել «Սասնա ծռերը», գրառել, լուսանկարել։ Թե ուր են գտնվում այդ նշանավոր վիպասացներից գրաված պատումները, առայժմ հայտնի չէ։

տող), թե՛ միջադեպերի բազմապիստությամբ, վիպական-կենցաղային մոտիվների առատությամբ ու մանրամասներով և թե՛, մանավանդ, Փոքր Մհերի ճյուղի վիպական միջադեպերի ծավալով ու հարստությամբ «Սասնա ծռերի» ներկայումս հայտնի շուրջ 160-ի հասնող տարբերակների մեջ մնում է ամենարեղարձակն ու չգերազանցվածը:

Վեպի այսպիսի նորահայտ հարուստ վաստակով էր Կ. Մելիք-Օհանջանյանը ոտք դնում հայ վիպագիտության անդաստանը, ուր տիրակալում էր Արեղյանի վիթխարի հեղինակությունը: Իսկ այդ հեղինակության վստահությունը արդեն շահել էր Կ. Մելիք-Օհանջանյանը ոչ միայն իր նոր վաստակով, այլև իւր գիտելիքներով, բանիմաց ջանասիրությամբ, անմնացորդ նվիրումով:

1932 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը Մ. Արեղյանի ընդհանուր ղեկավարությամբ ու համագործակցությամբ ձեռնամուխ է լինում «Սասնա ծռեր» վեպի տարբերակների դիտական համահավաքի կազմման աշխատանքներին: Արխիվային տարբեր ֆոնդերից, տպագիր ժողովածուներից հանվում, անհատ բանահավաքներից ձեռք են բերվում վեպի բազմաթիվ պատումներ, արտագրվում, շտրղատվածները Կ. Մելիք-Օհանջանյանի ձեռքով նախապես տողատվում են, բաժանվում առանձին հատվածների, վերնագրվում, ապա Մ. Արեղյանի կողմից ենթարկվում վերջնական խմբագրման ու վերանաման: Բացի այդ, արդեն գրաված, բայց որոշ պակասություններ ունեցող պատումներ, որոնց ասացողները տակավին կենդանի էին, Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից կրկին համեմատվում են դրանց ասացողների վերապատումների հետ, լրացվում ու ճշգրտվում: Մամուլում անգամ կոչ է տպագրվում՝ ուղղված Միության և սփյուռքի բանահավաքներին, ազդարարվում Պետհրատի նախաձեռնությունը, առաջարկվում ուղարկել իրենց մոտ եղած վեպի տարբերակները, նրշվում հրատարակության ու հեղինակային պայմանները⁹:

Արխիվային վավերագրերը վկայում են այն ծանր ու տքնաջան աշխատանքների մասին, որ թափել է Կ. Մելիք-Օհանջանյանը վեպի տարբերակների համահավաքը կազմելու վրա: Փաստորեն ամբողջ «սև» ու գործնական աշխատանքները կատարվել են Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից: Պատումները հավաքելուց, ի մի բերելուց, արտագրելուց կամ արտագրել տալուց, վերապատումների հետ համեմատելուց և ճշգրտելուց զատ, համահավաքի գիտակալն ապարատը ևս, բացառությամբ ծանոթագրությունների¹⁰, նախապես գրվել է Կ. Մելիք-Օհանջանյանի ձեռքով: Նա է գրել թե՛ վիպասացների մասին կենսագրական-առաջաբանները, թե՛ «Բարբառային-քերականական գիտելիքները», թե՛ համահավաքի ընդհանուր նախաբանը և թե՛, որ շատ կարևոր է, համահավաքի ընդարձակ ներածությունը: Այդ բոլորը, իհարկե, հանգամանորեն խմբագրված, լրացված կամ վերանայված են Մ. Արեղյանի կողմից, իսկ «Բարբառային-քերականական գիտելիքները»՝ անգամ ամբողջապես վերաշարադրված¹¹: Իսկ համահավաքի տարբերակների ճյուղագրությունը, հատուկ անունների և առարկայական ցանկերը կազմված են միայն Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից, չխոսելով այլևս այն մասին, որ համահավաքի տպագրության տևական ընթացքին հետևելու, սրբագրելու աշխատանքները մանավանդ Մ.

⁹ Ե. Չարենցի հանձնարարությամբ Մ. Արեղյանը գրավոր տեղական ռանակցություններ է վարում Ֆրանսահայ մտավորական, բանահավաք Տիգրան Զիթունու հետ, նրա գրառած վեպի չորս անտիպ պատումները հրատարակության ուղարկելու համար: Ցավոք, Պետհրատը չի հոծարում Զիթունու առաջարկած պայմաններին, և նրա գրառած արժեքավոր պատումները ցարդ մնում են անտիպ (տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Մ. Արեղյանի ֆոնդ, վավ. 114—116, 231, 233—235):

¹⁰ Ծանոթագրությունները կազմված են Մ. Արեղյանի կողմից, առանձին թերթերի վրա (տե՛ս ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, վավ. 429):

¹¹ Հմմտ. ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, վավ. 426—427, 429—440:

Աբեղյանի մահից հետո, ամբողջովին ծանրանում են Կ. Մելիք-Օհանջանյանի վրա:

Այս բարդ, տևական ու աշխատատար գործը ավարտվում է մեծ հաջողությամբ: 1936-ին լույս է տեսնում «Սասնա ծռերի» առաջին հատորը, 1944-ին՝ երկրորդ հատորի 1-ին մասը, իսկ 1951-ին՝ երկրորդ հատորի 2-րդ մասը, լադկացած 2636 էջից, շուրջ երեք տասնյակ ներդիր լուսանկարներով, քարտեզով և այլն¹², «Սասնա ծռերի» այս համահավաք հրատարակությունը ընդգրկում էր վեպի մինչ այդ և այդ օրերին գրաված լավագույն սլափումները՝ ճնշող մեծամասնությունը (47 տարբերակ):

Պատումները դասակարգված են ըստ նրանց լեզվական-բարբառային հատկանիշների կամ, այլ կերպ ասած՝ ըստ նրանց ազգագրական շրջանների և ենթաշրջանների, մի ճիշտ սկզբունք, որի շնորհիվ միմյանց էին հարում ու համախմբվում նմանատիպ բովանդակությամբ տարբերակները: Ըստ այդմ Ա. հատորում համախմբված են Վանա լճի ավազանի բարբառներով, ենթաբարբառներով ու խոսվածքներով (Վանի, Մոկսի, Շատախի, Նարեկի, Սպարկերտի, Գավաշի, Հայոց ձորի, Կաճետի) վիպիկող պատումները, իսկ Բ հատորում՝ Տառնի և կից գավառների (Մուշ, Սասուն, Ալաշկերտ, Բայազետ ևն) բարբառներով ու ենթաբարբառներով, ինչպես նաև Արարատյան դաշտի ու պարսկահայոց պատումները: Բացի այս ընդհանուր սկզբունքից, հատորների ներսում պատումները դասակարգված են նաև մեկ այլ ենթասկզբունքով՝ ըստ նրանց գրառման ժամանակի, թեպետ այդ կարգը երբեմն գիտակցաբար խախտվում է՝ հանուն պատումների բովանդակության տիպաբանական մերձության:

Ելնելով դասակարգման լեզվաբարբառային-տեղավայրային սկզբունքից, յուրաքանչյուր հատորի սկզբում ներկայացված են դրանում զետեղված պատումների կենցաղավարման ազգագրական շրջանների տեղագրությունն ու բարբառային-քերականական առանձնահատկությունները, որոնք ընթերցողին կոնկրետորոշում են պատումների միջավայրն ու լեզվական հատկանիշներն ըմբռնելու համար: Յուրաքանչյուր պատում ունի առաջաբան, ուր սեղմ կամ հանգամանալից շարադրված են վիպասացի, բանահավաքի, տվյալ պատումի հետ կապված կարևոր հանգամանքների մասին ձեռքի տակ եղած բոլոր տվյալները, որոնցով և այդ նախաբանները յուրատեսակ ծանոթագրությունների դեր են կատարում:

Գիտական առանձնակի արժեքով են բնորոշվում ընդարձակ ծանոթագրություններն ու բառարանը, որոնց մեջ հանգամանորեն մեկնաբանված են պատումներում առկա և բացատրության ենթակա պատմական-կենցաղային, վիպաառասպելաբանական և ժողովրդական մշակույթի այլևայլ կողմերին վերաբերող երևույթները, բարբառային, օտար ու խրթին բառերն ու դարձվածները: Թե՛ ծանոթագրությունները և թե՛ բառարանը արժեքավոր են ոչ միայն «Սասնա ծռերի» պատումները, այլև առհասարակ ժողովրդական բանահյուսության հուշարձանները լավ հասկանալու և հետազոտելու տեսակետից: Ծանոթագրություններին ու բառարանին են հաջորդում վեպի յուրաքանչյուր պատումի հերոսների ճյուղագրությունը, պատումների անվանական և առարկայական ցանկերը, վեպի տարածման աշխարհագրական քարտեզը:

«Սասնա ծռերի» ընդարձակ ներածությունը, որ Կ. Մելիք-Օհանջանյանը շարադրել էր Մ. Աբեղյանի 1908 թ. հրատարակած «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության տեսական դրույթների հիման վրա, համարված պատմա-աղբյուրագիտական նոր փաստերով ու տվյալներով, ինչպես նաև 1930-ական թվականներին սովետական բանագիտության մեջ արմատավորված ժողովրդական վեպերին տրվող անընդունելի մեկնաբանություններով, շոշափում էր «Սասնա ծռերի» ծագման, զարգացման, վիպական բուրգերի վրա, պատմա-

¹² Սասնա ծռեր. խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ.-Օհանջանյանի. հ. Ա, Երևան, 1936. հ. Բ, 1-ին մաս, Երևան, 1944. հ. Բ, 2-րդ մաս, Երևան, 1951:

կան հիմքերի, սոցիալական գաղափարախոսության, բովանդակության ու արվեստի էական խնդիրները:

Անկախ ներածության մեջ թույլ տված վեպի «սոցիալական փոխակերպման» սխալ և անընդունելի դրույթից, «Սասնա ծռեր» աշխատությունն ինքը, ամբողջությամբ վերցրած, հայագիտության պատմության մեջ բանահյուսական հուշարձանների առաջին գիտական հրատարակությունն էր, կատարված մասնագիտական բացառիկ հմտությամբ: Դա մի գործ է, որի արժեքը բոլոր առումներով մեր մշակույթի պատմության մեջ մնալու է անանյաների:

«Սասնա ծռերի» տեական հրատարակությունը, սակայն, չի սպառում վեպի նկատմամբ Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական հետաքրքրությունը: 1940-ական թվականներին գիտական ու թարգմանչական իր լարված ու ծանրաբեռնված աշխատանքների ընթացքում Կ. Մելիք-Օհանջանյանը անդրադառնում է տարիների իր փառալուստ երազանքի՝ Միհրի առասպելաբանության ու պաշտամունքի ուսումնասիրության մասնակի իրականացմանը: Եվ առիթը դարձյալ «Սասնա ծռերն» էր:

1945-ին նա ավարտում է «Միթրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ» ծավալուն ուսումնասիրությունը, որի մի գլուխը՝ «Միթրա-Միհրի արբանյակներն ու գործակալները» տպագրվում է Մ. Աբեղյանի հիշատակին նվիրված գիտական ժողովածուում¹³, Հենվելով միթրայական առասպելաբանության մասին մինչ այդ եղած ուսումնասիրությունների և հնչյունաբանության ձևեր բերած արդյունքների վրա Կ. Մելիք-Օհանջանյանը «Սասնա ծռեր» վեպի մի շարք անձնանուններ (Հոթոթ-մոթոթ, Խոր Մանուկ, Ծովինար) համոզիչ կերպով վերլուծում և կապում է Միհրի առասպելների և սլաշտամունքի ոլորտներին, բացահայտում նրանց, ինչպես նաև Մեծ ու Փոքր Մհերների դուցազնական արարքների առնչությունները միհրական հնագույն առասպելների հետ, փորձում է հարցադրման կարգով ֆունկցիոնալ ու ժառանգական աղբյուրներ սահմանել մի կողմից դուցազն Հայկի և իրանական ու հունական երկնքի ու ժամանակի աստվածություններ Զրվանի, Ուրանոսի և տիտան Քրոնոսի միջև, մյուս կողմից՝ Հայկի և վիպական Դավթի ու Քեոի Թորոսի միջև, վերջիններիս դիտելով իբրև Հայկի տարբեր ֆունկցիաների ժառանգորդներ:

Անկախ վիճելի որոշ հարցադրումներից ու պնդումներից, Կ. Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունը կատարված է լայն ընդգրկումով, տարբեր գիտությունների փաստերի ու տվյալների հաշվառման հիման վրա և, որ կարեւոր է, պատմական առումով այն վեպի առասպելաբանական հիմքերից մեկին նվիրված առաջին անկախ և առանձին հետազոտությունն էր:

1950-ական թթ. սկսած Կ. Մելիք-Օհանջանյանը որոշում է «Սասնա ծռերի» նկատմամբ իրագործել մի նոր մտահղացում: Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, Կ. Մելիք-Օհանջանյանը այդ տարիներին քանիցս դիմում է Հայաստանի, անգամ Սովետական Միության կուսակցական ու պետական գործիչներին, ցույց տալով հայ ժողովրդական վեպի տարբերակների ուսերեն գիտական թարգմանության անհրաժեշտությունը: Նա գտնում էր, որ նման թարգմանության շնորհիվ ուսու և միջազգային բանագիտությանը վերջապես հնարավորություն կընձեռվի անմիջապես շփվել վեպի բուն սկզբնաղբյուրների հետ, հետազոտել հայ ժողովրդական վեպը, որը մեծահարուստ նյութ կտա ընդհանուր և համեմատական բանագիտության շատ խնդիրներ լուծելու համար¹⁴:

Իր այս գաղափարը Կ. Մելիք-Օհանջանյանը 1940-ական թթ. կեսերին պարզաբանել էր ակադ. Հ. Օրբելուն և արժանացել նրա անվերապահ հավանությանը: Եվ երբ 1950-ական թթ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան նախաձեռնում է «Литературные памятники» մատենաշարով հրատարակել հայ

¹³ Գրական-բանասիրական հետախուզումներ. գիրք առաջին, Երևան, 1946, էջ 269—327:

¹⁴ Տե՛ս Կ. Մելիք-Օհանջանյանի արխիվ, Գր. Հարությունյանին, Ա. Միկոյանին, Ս. Թովմասյանին ուղղված նամակների պատճենները:

ժողովրդական վեպը, Հ. Օրբելին առաջարկում է դրա դիտական թարգմանությունը հանձնարարել Կ. Մելիք-Օհանջանյանին:

1950-ական թթ. երկրորդ կեսին Մոսկվայում աշխատանքներ են սկսվում «Эпосы народов СССР» նոր մատենաշարի հիմնադրման և սովետական ժողովուրդների էպոսների գիտական հրատարակությունը այդ մատենաշարով իրականացնելու ուղղությամբ: Աշխատանքները ղեկավարում էր ՍՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը, որի հանձնարարությամբ և ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը իր միջոցներով առաջարկում է Կ. Մելիք-Օհանջանյանին իրագործել «Սասնա ծռերի» ընտիր տարբերակների ռուսերեն գիտական թարգմանությունը: Փոխադարձ բանակցություններից հետո, 1959-ին Կ. Մելիք-Օհանջանյանի և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի միջև կնքվում է աշխատանքային համապատասխան պայմանագիր, որով Կ. Մելիք-Օհանջանյանը պարտավորվում է իր ընտրությամբ թարգմանել որպես տարբերակներից շուրջ 20 հազար տող: Ընդ որում պայմաններից մեկն էլ այն էր, որ թարգմանությունը «պետք է լինի գիտական և չի տրվելու պոետական մշակման»: Թարգմանության սկզբունքները և նյութի ընտրությունը 1959 թ. քննարկվում և հաստատվում են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բանահյուսության բաժնի ընդլայնված նիստում և արժանանում միահամուռ հավանության:

Կ. Մելիք-Օհանջանյանը մեծ եռանդով նվիրվում է տարիների իր փայփայած ու գործնականում հետամտած նպատակի իրագործմանը: Երկու տարվա ընթացքում ուսաց լեզվի և հայ ժողովրդական վեպի իր գերազանց իմացության շնորհիվ նա թարգմանում է Սասնա, Մշո, Ալաշկերտի, Մոկաց, Արատյան բարբառներով ու ենթաբարբառներով գրաված վեպի տասը լավագույն պատումները, հաղթահարում լեզվաոճական, բարբառային, տեղային-ազգագրական ըմբռնումների ու հասկացությունների բաղմամբիվ դժվարություններ և 1962-ին թարգմանությունների բնագրերը ուղարկում է Մոսկվա՝ խմբագրման և քննարկման: Թարգմանությունների խմբագրությունն ու ոճաբանումը հանձնարարվում է նշանավոր հայկաբան Հովսեփ Կուսիկյանին: Վերջինս 1964-ին ավարտում է խմբագրումը, հիացած մնում թարգմանության բարձր որակից, կատարելով միայն մի քանի աննշան շտկումներ ու դիտողություններ: Թարգմանությունը Գորկու անվան գրականության ինստիտուտի կողմից հանձնվում է բանագետ Վ. Մ. Գաջակին գրախոսության և ապա քննարկման դրվում ինստիտուտի ֆուլկորի բաժնում: Թե՛ գրախոսը և թե՛ բաժինը նյութի ընտրությանն ու թարգմանության որակին տալիս են ամենաբարձր գնահատականը, իսկ Վ. Գաջակը այն համարում է «նշանավորագույն Լրևույթ»: Տարբերակների թարգմանությունից բացի, Կ. Մելիք-Օհանջանյանը կազմում է բնագրերի մանրակրկիտ ծանոթագրությունները, ինչպես նաև գրում բնագրի ներածություն՝ նվիրված հայ հին վիպական ավանդության պատմատիպաբանական գարգացմանը: «Սասնա ծռերը» մտնում է անդամ Գորկու անվան գրականության ինստիտուտի 1968 թ. հրատարակչական պլանի մեջ:

Սասնագիտական բարձր մակարդակով կատարված այդ աշխատության հրատարակումը, սակայն, հետագայում մատենաշարի զլխավոր խմբագրության կողմից կատարած հրատարակչական սկզբունքների փոփոխության հետևանքով և զանազան պատճառաբանություններով երկար ձգձգվում է և ի վերջո դադարեցվում:

Կ. Մելիք-Օհանջանյանի այդ աշխատությունը ունի գիտական շատ կարեւոր արժեք՝ հայ ժողովրդական վեպի սկզբնաղբյուր տարբերակները ստույգ թարգմանությամբ միջազգային գիտական շրջանառության մեջ դնելու, այլալեզու մասնագետներին հնարավորություն՝ ընձեռելու՝ օգտվել հայկական վեպի բուն բնագրերից, որոնք հարուստ ու մեծարժեք նյութ են պարունակում համատարած վիպագիտության, առասպելաբանության և բանագիտության

համար առհասարակ: Հանրապետության գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտները պետք է զբաղվեն նրա հրատարակության գործով:

«Սասնա ծռերի» տարբերակների հավաքման, գիտական հրատարակման, հետազոտության և թարգմանության տարիների կուտակած իր անանցանելի վաստակի հետևանքով Կ. Մելիք-Օհանջանյանը կյանքի վերջին տարիներին իրավամբ ձեռք էր բերել հայկական վեպի լավագույն գիտակի համազգային և միջազգային հեղինակություն: Դրան մեծապես նպաստում էին գիտնականի մարդկային հմայիչ ու առինքնող խառնվածքը, մարդամոտ բնավորությունը, լայնահուն ու խոր գիտելիքներով այլոց օգնելու մշտական պատրաստակամությունը: Այդ էր պատճառը, որ Միության և աշխարհի տարբեր ծայրերից հայ հերոսավեպին առնչվող որևէ խնդրի առթիվ հաճախ դիմում էին Կ. Մելիք-Օհանջանյանի հեղինակավոր կարծիքին կամ խորհրդին և միշտ լիաբուռ հատուցվում: Այսպես՝ վեպի Լ. Զ. Սյուրմելյանի կատարած անգլերեն թարգմանության ձեռագիրը թարգմանչի կողմից անձամբ բերվեց Երևան, Կ. Մելիք-Օհանջանյանի մասնագիտական խորհուրդներով համեմատվեց բնագրի հետ, կատարվեցին համապատասխան ճշգրտումներ, լրացումներ և այլն: Նույն կերպ Կ. Մելիք-Օհանջանյանի խորհրդատվությամբ ու մասնագիտական միջամբողջություններով իրագործվեցին հայ հերոսավեպի Իգոր Սիկիրիցկու կատարած լեհերեն և Բորիս Կաբուրի՝ էստոներեն թարգմանությունները¹⁵: Իսկ «Սասունցի Դավթի» ֆրանսերեն թարգմանիչ, նշանավոր հայագետ պրոֆ. Ֆր. Ֆեյդին, իր կատարած թարգմանության լույս տեսնելուց հետո, վեպի հետ կապված իրեն հուզող մի շարք հարցեր ու տարակուսանքներ պարզեց Կ. Մելիք-Օհանջանյանի հետ ունեցած անձնական զրույցների ու մտքերի փոխանակության ժամանակ:

Կ. Մելիք-Օհանջանյանը «Սասնա ծռերի» նկատմամբ ուներ ուրույն վերաբերմունք: Այն իր համար սոսկ հետազոտության շոր ու օբյեկտիվ առարկա չէր, այլ իր սեռն ու խանդաղատանքը միշտ շարժող հավերժ կենդանի մի իրողություն: Նրա համար Սասնա դյուցազուն հերոսները ապրող ու շնչող, մարդկային թուլություններով օժտված հարազատներ էին, մերձավոր արյունակիցներ, որոնց ճակատագրի նկատմամբ, հատկապես Փոքր Մհերի, երբեք անտարբեր չէր կարող մնալ: Սասնա դյուցազնական ծռերը նրա համար նույնն էին, ինչ մեծ գրողների, բանաստեղծ-արվեստագետների համար իրենց արարած կերպարները: Նա նման էր վիպական Քեռի Թորոսին, որի կյանքի նըպատակը իր հարազատ երկրի ու դյուցազուն զարմիկների ապահովությունն ու անվտանգությունն էր:

Նույնպիսի խանդաղատանք էր տածում Կ. Մելիք-Օհանջանյանը այդ վեպը պահող-վիպողների նկատմամբ: Իր գրառած Ալաշկերտի ընդարձակ պատումի վիպասաց Մանուկ Թորոսյանին վերաբերվում էր հարազատ հոր նման. Հասավ այն բանին, որ այդ տաղանդավոր վիպասացը, իր թափած գործուն ջանքերի շնորհիվ, ընտրվեց Հայաստանի գրողների միության անդամ: Իսկ նույն վիպասացի մահից տարիներ անց, դարձյալ Կ. Մելիք-Օհանջանյանի եռանդուն միջամտությամբ, Երևանի քաղաքի գործկոմը, Հայաստանի գրողների միության վարչության միջնորդության հիման վրա, 1962 թ. հուլիսին կանգնեցրեց Մանուկ Թորոսյանի շիրիմին:

Եվ այսօր, Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 90-ամյակի տարելիցին, երբ հանրագումարի է բերվում ականավոր գիտնականի տարիների վաստակը, խորին պատկառանքով, սիրով ու երախտագիտությամբ ես լցվում այդ մեծ հոգու տեր, ազնիվ ու մեծատաղանդ մարդու, քաղաքացու, հայագետի հիշատակի

¹⁵ Տե՛ս նաև Ա. Ղանալանյանի ներածականը «Կ. Ա. Մելիք-Օհանջանյան» կենսամատենագիտության մեջ, էջ 32:

հանդեպ, մարդ, որի ապրած դիտակցական կյանքի տարիների մեծ մասը ինքնամոռաց նվիրում էր հայ ժողովրդական մեծ վեպին: Վեպը նրա կյանքի իմաստն էր և նրանից արգասապրվել է այնպիսի մնայուն արդյունքներով, որոնց շնորհիվ Կ. Մելիք-Օհանջանյանի անունն այսօր արժանապես վաստակել է հայ վիպագրիտոթյան մեծ երախտավորների երրորդության պատիվը՝ Գրեգորի Սրվանձտյանի և Մանուկ Աբեղյանի անունների շարքում:

ЗАСЛУЖЕННЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬ АРМЯНСКОГО ЭПОСА

(К 90-летию со дня рождения К. А. Мелик-Оганджяна)

Доктор филол. наук С. Б. АРУТЮНЯН

(Резюме)

В многогранной деятельности знаменитого армениста-востоковеда академика АН АрмССР Карапета Мелик-Оганджяна важное место занимало изучение армянского эпического фольклора и особенно эпоса «Сасна црер» («Давид Сасунский»). Возглавив в 1930-х годах фольклорную экспедицию Института культуры Армении, ученый записал в разных районах республики 8 новых вариантов «Сасна црер», из которых два от сказителей—выходцев из Сасуна, где до этого эпос не был зафиксирован. В тот же период К. Мелик-Оганджян вместе с М. Абегианом и под его руководством издает в трех книгах научный свод вариантов эпоса «Сасна црер» (1936, 1944, 1951 гг.), имеющий большую научно-культурную ценность в истории армянской фольклористики. Мифологическую основу армянского эпоса Мелик-Оганджян изучает в 1940-х годах («Митра-Михр в эпосе «Сасна црер»), а с начала 1960-х годов он переводит на русский язык 10 избранных вариантов эпоса с обширным научным аппаратом для издания в Москве в серии «Эпосы народов СССР». В последние десятилетия своей жизни К. Мелик-Оганджян, будучи блестящим специалистом и уникальным знатоком всех тонкостей армянского эпоса, активно содействовал его международному распространению.